



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ
ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ
WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
 Archbishop Moushegh Mardirossian, Prelate
 Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



«ԿԱՆԱՆՑ ՀԱՍՏԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՂՕԹՔԻ ՕՐ»ՈՒԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՊԱՅՈՒՆ

**ԱՌԱՋԻՆ ՀԱՅ ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ՏԻԿԻՆՆԵՐՈՒ ԿԵԱՆՔԻ
 ՕՐԻՆԱԿԸ ՆԵՐՇՆՉՄԱՆ ԱՂԲԻՐ ԹՈՂ ԸԼԼԱՅ**

ՊԱՏԳԱՄԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ

Քրիստոնեայ եկեղեցիները ունին տարիներու ազնիւ աւանդութիւն մը. ամէն տարի, Մարտին, անոնք կը նշեն Կանանց Համաշխարհային Աղօթքի Օրը, այս առիթով կը կազմակերպուին աղօթքի ու խորհրդածութեան յատուկ պահեր, աղօթք բարձրացնելու համար ի խնդիր աշխարհի խաղաղութեան:

Հայկական մեր եկեղեցիները եւս մասնակից են այս նախաձեռնութեան եւ զայն կը նշեն Մարտի առաջին Ուրբաթ օրը: Հոգեւոր Առաջնորդներու շուրջ խմբուելով, բազմաթիւ հաւատացեալներ օրը կը նշեն հաւաքական աղօթքով, շարականներու երգեցողութեամբ եւ հոգեւոր պատգամներով ու խորհրդածութիւններով:

Այս տարի, Կանանց Աղօթքի օրը նշուեցաւ Ուրբաթ, 2 Մարտի առաւօտուն, Փասատիւնայի Հայ Նազովրեցի եկեղեցւոյ մէջ: Օրուան բնաբանն էր «Միացած Աստուծոյ վրանին տակ»:

Աղօթքի օրուան արարողութեան ներկայ եղան եւ յատուկ պատգամներ ուղղեցին Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսեան, Հայ Կաթողիկէ համայնքի Առաջնորդ Հոգ. Տ. Անտոն Վրդ. Սարոյեան, Հայ Աւետ. համայնքի Հոգեւոր Հովիւներ՝ Վեր. Յովսէփ Մաթոսեան, Վեր. Տոքթ. Վահան Թութիկեան եւ Վեր. Փօլ Տոքթորեան: Պատգամներ ուղղեցին նաեւ (հայերէն ու անգլերէն լեզուներով) հոգեւոր յայտագիրին մէջ բաժին վերցնող տիկիւններ: Մասնակից էին հարիւրաւոր հաւատացեալներ:

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԻՆ ԽՕՍՔԸ

Իր խօսքին մէջ, Առաջնորդ Սրբազանը նշեց, որ այս պահուն, յիշողութեամբ կը վերադառնայ մեր ժողովուրդի պատմութեան քրիստոնեական կեանքի առաջին շրջանները, որոնք ներշնչումի աղբիւր են հայ քրիստոնեային համար: Ան յատուկ յիշատակութիւն կատարեց մեր հայրենիքին մէջ քրիստոնեութեան համար առաջին նահատակ Ս. Սանդուխտի, առաջին քրիստոնեայ թագուհի Ս. Աշխէնի մասին, ապա նաեւ վեր առաւ առաքիւնութիւնն ու զոհաբերութիւնը Վարդանանց պատերազմի օրերու հայ իշխաններու տիկիւններուն, »որոնց հաւատարմութեան ու նուիրումի

ոգին կը մարմնաւորուի այս աղօթքին մասնակցիներուն մէջ: Ան ընդգծեց, որ եկեղեցին քրիստոնեային համար հաւատքի վեմ է ու այս հաւաքին բնաբանը՝ »Միացած Աստուծոյ վրանին տակ«, լաւագոյնս կ'արտայայտէ աղօթքի պահուն իմաստը:

Յայտագիրը վերջ գտաւ Առաջնորդ Սրբազանին աղօթքով:

DURING THE WOMEN'S WORLD DAY OF PRAYER

**MAY THE EXAMPLE OF THE FIRST CHRISTIAN WOMEN
BE A SOURCE OF INSPIRATION**

DECLARED THE PRELATE

It has become a beautiful tradition for Christian Churches to come together for prayer and reflection each year on the occasion of Women's World Day of Prayer. The Armenian Church commemorates this day on the first Friday of March with prayer, hymns, scripture readings, and a cultural program.

On the morning of Friday, March 2nd, the spiritual leaders and parishioners from the Armenian Apostolic, Catholic, and Protestant Churches gathered at the Armenian Church of the Nazarene in Pasadena to celebrate Women's World Day of Prayer, the theme of which was "United Under God's Tent". In attendance and participating in the program were H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, Rev. Fr. Andon Saroyan of the Armenian Catholic Church, and Rev. Joe Matossian, Rev. Dr. Vahan Tootikian, and Rev. Paul Doctorian of the Armenian Evangelical Church. Messages and scripture readings were also presented by the participating women.

During the program, the Prelate conveyed his words of wisdom and offered the benediction. In his remarks, the Prelate reflected on the virtue and sacrifices of our first Christian martyr St. Santoukht, our first Christian queen St. Ashkhen, as well as the wives of the Armenian princes who fought in the Vartanants battle, emphasizing that this gathering is the embodiment of their faith and spirit of devotion. He stressed that the church is the foundation of faith for Christians and the theme "United under God's Tent" best expresses the meaning of prayer.

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](http://www.westernprelacy.org) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to info@westernprelacy.org, Visit our Website www.westernprelacy.org Copyright . 2007 All rights reserved.